հաւանութեամբ (13)։

Էջմիածին վերադարձին, Յակոբ Զուղայեցի կ'որոշէ խստիւ պատժել Անուիրիոսը։ Ականատես Պատմիչը կ'ըսէ. «Առեալ մկրատ Կաթուղիկոսն, եւ խուզեաց զգլուխըն, եւ ապա զմօրուսն. եւ ասէ նա. «Աղաչեմ վասն Աստուծոյ՝ զգլուխս խուզեցեր, մօրուս մի՛ խուզեր»։ Ասէ Կաթուղիկոսն. «Ո՛վ ատելի Աստուծոյ՝ դու ասացեալ ես, թէ ես հատանեմ զգլուխ Կաթուղիկոսին, եւ հաստատեմ զնա ի վերայ իջման տեղին, եւ առնել ի վերայ նորա Պատարագ։ Արդ մե՞ծ իցէ մօրուս քո քան զգլուխ իմ, ընկա՛լ զփոխարէնն». եւ խուզեալ զամենայն հերսն, եւ տարեալ տրկին զնա յառաջին զնտանն իւր չղթայիւք... ասացին նմա, ուր թաքուցեալ էքն զռազամսըն, եւ զմլքերոց կապալայքն։ Եւ նա ուրանայր՝ թէ ոչ գիտեմ. եւ ապա եդին կոճղ ի յոտս նորա, եւ ա՛յնքան բրածեծ արարին զնա ի բանտին՝ մինչեւ առաքեաց զքեռորդին իւր յԵրեւան Քաղաք, եւ ետ բերել զամենայն. եւ ի մէջ թղթոցն գիրս արքունի՝ մին վասն Կաթուղիկոսութեան, երկրորդ՝ վասն հնազանդ լինելոյ նմա ամենայն եկեղեցականաց, երրորդ՝ վասն մելիքութեան ազգաց իւրոց։ Եւ ապա առաքեցին զնա ի Սեւան կղզի՝ դնել ի սենեկի, եւ ոչ թողուլ մտանել զոք առ նա։ Կացեալ անդէն աւուրս ինչ, ի տրտմութենէ սրտին եւ ի բազում

(13) Անդ, 66–70, 84–88։